

(47.925)

U-45

56

10298

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՎԱՆԱՅ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

1910 ապրիլ 5—1911 ապրիլ 5,



Թ. Խ. Յ. Լ. Խ. Ս.
Էլեմենտար սպառակ Օր. Ն. Աղամինանի, պօլից., 7.

1911

Զ: Զ (074)

S-32

ՏԵՂ ՏՕՒ [ՀԱՅԱՍՏԱՆ]

S-32

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՎԱՆԱՑ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

003
14461
1

1910 ապրիլ 5—1911 ապրիլ 5

• • • • •

Թ. 1 Յ. 1 Ի. Ս
ԽԵԲԵՐԱԿԱՐԾ ՏԱՐԱՎԱԾ ՕՐ. Ն. Ա. ՊԱՄԵԼԻՆԻ, պօլից., 7.

1911

ԱՐԴԻՌՈՒՅՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅ-ԱԽՏՎԱ ԱԽՏԵՐԱԿ ԳՈՅԱ ՑԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱԽՏԵՐԱԿ ՀԵՐԱ
ՀԱՅ-ԱԽՏՎԱ ԱԽՏԵՐԱԿ

Տ ՐԱՄԱ ՌԵԼ-Տ ՐԱՄԱ ՌԵԼ

1910 ապրիլ 5—1911 ապրիլ 5

ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

ՆԱԽԱԳԱՀ

1. Հանդ. Առաջնորդ Թիֆլիսի թեմի՝ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս՝ մինչև 1911 թ. հոկտեմբերի 18-ը՝ այնուհետև ժամանակաւոր նախագահ՝ Յանձնաժողովի ընտրութեամբ ԱՐՃԱԿ ԲԱԲԵԱՆ

ԱՆԴԱՄԱՆԿՐ

2. ԱՂԱՆԵԱՆ ԳԻՒՏ ա. Քահ.
3. ԲԱԲԵԱՆ ԱՐՃԱԿ
4. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ
5. ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ - ՅԱՐՈՅ ՆԻԿՈՂՈՅՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թ.ԻՓԼԻՍԻ

ՎԱՆԱՅ Ա.Ի.Գ. ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ
ԹԱՆԴԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

1910 թ. ապրիլի 7-ին կայացած «Ղուկաս
սեան մրցանակաբաշխութիւնից» յետոյ՝ մինչև
1911 թ. Յանձնաժողովս ստացել է հետևեալ
աշխատութիւնները.

№ 1. Հայոց եկեղեցւոյ կանոնական իրաւունքը—հետազօտութիւններ նորա կանոնագրքի խմբագրութեան, բովանդակութեան ու գործադրութեան մասին, գրեց Լահեան, ձեռագիր աշխատութիւն ամփոփուած մի քառածալ տետրի մէջ:

№ 2. Կիւրիոն կաթողիկոս Վրաց. պատմութիւն հայ-գրական յարաբերութեանց է գարումէջ. գրեց Հ. Ներսէս Ակինեան. տպագիր. Վիեննա 1910 թ.

№ 3. Յիշատակաբան. աշխատութիւն Վահան Գ. Զարդարեանի, հատոր Ա. տպագիր. Կ. Պոլիս 1910 թ.:

Այս աշխատութիւնների մասին ցանկանալով
իմանալ մասնագիտական պատրաստութիւն ու-

նեցող անձանց կարծիքները, Յանձնաժողովս ու-
րոշեց ուղարկել հետևեալ յարգելի անձանց քըն-
նելու և իրենց պատճառաբանուած կարծիքը գրա-
ւոր յայտնելու. .

№ 1. Աշխատութիւնն ուղարկուեց Ամե-
նապատիւ Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմա-
նեանին, Կ. Պօլիս:

№ 2. Աշխատութիւնն ուղարկուեց Բարձրա-
պատիւ Գարեգինվարդապետ Յովսէփեանին, Էջ-
միածին:

№ 3. Աշխատութիւնն ուղարկուեց Նորին
Սրբազնութիւն Բարգէն եպիսկոպոս Կիւլեսէրեա-
նին, Կ. Պօլիս:

Վերոյիշեալ անձանց քննադատութիւնները
նշանակուած ժամանակին ստացուեցան: Յանձ-
նաժողովս մարտի 25-ին կայացած նիստում եր-
կար խորհրդակցելուց, ներկայացրած աշխատու-
թիւնների բոլոր հանգամանքները կշռադատելուց
և ստացուած քննադատութիւնները կարդալուց
յետոյ հնարաւոր չգոտաւ մրցանակ տալ առա-
ջարկուած աշխատանքներին:

Այսպիսով 1911 թ. ներկայացրւած ամկա-
ւաթիւ աշխատանքներից ոչ մէկը մրցանակ չստա-
նալով մրցանակաբաշխութեան կանոնադրութեան
ԺԱ. կէտի համաձայն «մրցանակի գումարը պի-
տի գործ գնուէի նախնեաց ընտիր մատենագրու-
թեանց տպագրութեան վրայ»:

Այս տարի նախնեաց ընտիր մատենա-
գիրներից Յանձնաժողովս տպագրեց Ստեփաննոս
Օրբէլեանի ստուար պատմութիւնը և 50 կ. գին
նշանակեց:

Յանձնաժողովիս նախագահ գերապատիւ Սա-
թունեանի մահից յետոյ կանոնադրութան Բ.
կէտի համաձայն՝ Յանձնաժողովս իւր անդամնե-
րից պ. Ա. Բաբեանին ընտրեց ժամանակաւոր
նախագահ մինչև Թիֆլիսի թեմի նոր առաջնորդ
նշանակուելը:

Հայ չքաւոր օրիորդներին օժիտ տալու հա-
մար անցեալ տարիների ձևով՝ ներկայացրած վկա-
յականներից կազմուեց 188 օրիորդների անուա-
նացանկ և 1911 թ. ապրիլի 5-ին վիճակն ըն-
կաւ հետեւեալ երեք օրիորդներին. № 41 օր.
Շուշանիկ Հայպատելեան, № 58 օր. Մարիամ
Ուրումեան և № 115 օր. Հայկանուշ Պապովեան:

1911 թ. Ծխատէր քահանաների վկայու-
թեամբ ներկայացրած չքաւորներին պէտք է բա-
ժանուէր 200 լուբլի, սակայն որովհետև անցեալ
տարիներից չքաժանուած մնացել է 1908 թ.—8 ր.
1909 թ.—84 ր. և 1910 թ.—3 ր.—ընդամենը
95 լուբլի, այս գումարը սոյն տարուայ 200 լուբ-
լու հետ միասին որոշուեց բաժանել ապրիլի 7-ին
աղքատներին:

ՄԵԾԱԾԱՐԳ ՄՆԱՅՈՒՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՏՓԽԻՍԻ ՎԱՆԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱՊԱՏԱ-
ԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Հնդունեցի Մեծ. Վարչութեանդ թիւ 72 և նոյեմ.
20 թուակիր պաշտօնագիրը, որով իմ քննութեան
կենթարկեք պլ. Վ. Գ. Զարդարեանի կազմած «Յի-
շատ ակար անը»:

«Յիշատակարանը» իբր յղացում շատ հետաքրքրական է. բայց դժբախտաբար ամբողջ գործը չէ, ոչ ալ ամբողջ գործին որոշ մէկ մասը։ Վասն զի ամբողջ գործը, ինչպէս որ յայտաբարուած է այս հատորի կողքին վրայ, պիտի բաղկանայ չորս հատորներէ, որոնցմէ Ա. հատորը միայն հրատարակուած և մատուցուած է Մեծ. Վարչութեանդ՝ «Ղուկասեան Մրցանակաբաշխութեան» համար։

Ես չեմ կարծեր, որ ուղիղ և կարելի ըլլայ այս
մէկ հատորին վրայ ընկը ամբողջ գործին քննութիւնը
և գնահատել ատոր իրական արժէքը։ Թերի գործի
մը թերի քննութիւնը՝ ուղիղ արդիւնք մը պիտի
չտար։

Հետևաբար, եթէ Մհծ. Վարչութիւնդ յարմար դատէ, կառաջարկեմ սպասել չորս համորներու հրատարակութեան և չորսը միանգամայն յանձնել քննու-

թեան. և վստահ եմ որ այդպիսի քննութեան մը արդիւնքը աւելի ուղիղ և հետեաբար աւելի գոհացուցիչ պիտի ըլլայ թէ քննելի աշխատութեան և թէ Մեծ. Վարչութեանդ գնահատութեան համար:

Յաջողութիւն մաղթելով Զեղ, ողջոյններով մը-նամ աղօթաբար.

Բարգին Եպիսկոպոս Գաղատիոյ

Կիրիլի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՎՐԱՅ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ-ԿԻՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ-ՄԷՋ. ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹԻՒՆ. ԳՐԵՑ Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԵՆ. ՎԻԵՆԱ, 1910

Հեղինակն արդէն յայտնի է բանասիրական աշխարհին իւր մեծ ու փոքր ուսումնասիրութիւններով. ինչպէս միւս աշխատութիւնների մէջ, այստեղ ևս ցոյց է տալիս մանրակրկիտ և գիտնականին վայել ջանասիրութիւն ու հետազօտող ոգու յատկութիւններ. նա օգտուել է աւելի կամ նուազ չափով յայտնի աղբիւրներից և ուսումնասիրութիւններից և այն ոչ ստրկաբար, այլ քննադատութեամբ և ընտրութեամբ: Հնարաւորութիւն չէ ունեցել անմիջապէս օգտուելու միայն վիրական աղբիւրներից՝ վրացերէն չիմանալու պատճառով, բայց ծանօթ է նրանց էութեան Բրոսսէի, Մառի, Զաւախովի և այլոց միջնորդութեամբ: Այդ աղբիւրներն առանձին արժէք էլ չունին քննութեան ենթակուած խնդրի համար: Հ. Ակինեանն առաջինն է, որ մենագրական ուսումնասիրութիւն է տալիս Հայոց և Վրաց եկեղեցիների յարաբերութեան, քննութեան և համեմատութեան ենթակելով ազգային և օտար մատենագրութեան մէջ պահուած տեղեկութիւններն ու աւանդութիւն-

ներն այդ մասին: Զաւախովի աշխատութիւնը՝ Исторія Церковного Разрыва между Грузіей и Арменією գրուած է աւելի ուշ և չունի մեր հեղինակի մանրամասնութիւնները: Ճշմարիտ է, հեղինակը մի նոր տեսակէտ կամ լուսաբանութիւն չէ տալիս քննութեան նիւթ կազմող շրջանի պատմութեան համար, բայց աշխատում է վերլուծութեան ենթարկել, զաել իւր տաղածի նիւթերը և ապա կառուցանել Հայ-վիրական եկեղեցիների յարաբերութեան և բաժանման պատմութեան շէնքը: Այդ կողմով էլ գնահատելի է այն իբրև մի ամբողջական մենագրութիւն, թէպէտ ոչ առանց պակասութեան:

Հեղինակը ներածութեան մէջ առանձին գլուխ-ներով քննութեան է ենթարկում, «Հայ-վրական յարաբերութիւնք ՚ի—է դարուց մէջ», «Վրաստանի քաղաքական հանգամանքներն Զ—է դարուց մէջ» և ապա աղբիւրների՝ այսինքն «Գիրք Թղթոցի» և Ուխտանիսի պատմութիւնը, երեք միմեանցից անկախ և բուն նիւթի հետ քիչ շաղկապուած մենագրական յօդուածներ: Ներածութեան առաջին գլուխը իւր շօշափած շատ ինդիրներով կրկնում է բուն աշխատութեան Ա. գլխի մէջ, իսկ Ուխտանիսի անձնաւորմաւթեան և պատմութեան մասերի մատենագրական մանրամասն ուսումնասիրութիւնը հեռացնում է հեղինակին բուն նիւթից: Ուխտանիսի աշխատութեան մի մասը միայն սերտ կապ ունի նկարագրելիք պատմութեան հետ, բայց այդ դէպքում իսկ աղբիւրների քննադատութիւնը իւր ընդարձակութեամբ չպէտք է մենագրական բնաւորութիւն ստանայ ի վասն պատմական նկարագրութեան ամբողջութեան:

Հեղինակը բաւական յաջող կերպով պատկերացնում է երկու եկեղեցիների յարաբերութիւնը, թէնե-

րածութեան և թէ բուն նիւթի մէջ. հակառակ վիրական աղբիւրների, նա քրիստոնէութեան մուտքը վրաստանում ընդունում է կուսաւորչի և նորա անմիջական յաջորդների օրով, վրաց տառերի գիւտը և ո. Գրքի թարգմանութիւնը կապուած ո. Մեսրոպի առաքելական ջանքերի հետ, միահամուռ պայքարը քրիստոնէութեան պաշտպանութեան համար է, և Զ. դարում ընդէմ Սասանեանց, Վրաց կաթողիկոսներից ոմանց ձեռնադրութիւնը Հայոց հայրապետներից, բայց պատմական նախապաշտումը յաղթող է հանդիսանում նորա վերայ, երբ շօշափում է Հայոց եկեղեցու ինքնագլխութեան և միւս եկեղեցիների հետ ունեցած խնդիրը: Բայց Զ. Ակինեանի Հայոց կաթողիկոսութիւնը բարձրագոյն մետրապօլտութիւն էր Վրաց համար և ենթարկուած Անտիոքի իրաւասութեան Կեսարիայի միջնորդութեամբ, որ Գաթրճեանի և Վերերի *) կարծիքների ամփոփումն է: Ոչ Նիկոյ Զ. կանոնը և ոչ միջնադարեան աղբիւրները, որոնք Վրաց եկեղեցին կախուած են համարում Անտիոքից, այդ իրաւունքը չեն տալիս նորան: Նիկոյ ժողովի վերոյիշեալ կանոնի համաձայն Անտիոքը հաւասար է համարւում Աղէքսանդրիայի և Հոռվիաթոններին, և թէ անկունով չյիշուած ձլաւ և պաչչիւ ըստ Կ. Պոլոյ ժողովի Բ. կանոնի բացատրութեան՝ Ասիան, Պոնտոսը (Կիսարիա) և Թրակիան ընդունենք, դարձեալ Հայաստանը չէ մտնում այդ սահմանի մէջ: ***) Oriens վերատեսչութիւնը (Diocese) ինչ ընդարձակութեամբ էլ հասկանանք, Հայաստանը մէջը չէ: Նիկոյ և Կ.

*) Die Katholische Kirche in Armenien. Freiburg i.B. 1903

**) Hefele. Conciliengeschichte I. 389. u II 15

Պօլսոյ ժողովսերը կայսրութեան թեմերն ունին ինկատի և ոչ մի օտար պետութիւն, որ թէն հարկատու և դաշնակից հոռվմէականի, բայց անկախ էր իւր կազմակերպութեամբ և օրէնքներով։ Կ. Պօլսոյ ժողովի երկրորդ կանոնի վերջին, անցողակի պարբերութիւնը կարելի է նոյն իսկ յօգուտ այս գրութեան բացատրել։ Վերերի ենթագրութիւնների վերայ հիմնուած եղրակացութիւնները այս խնդրում առանձին արժէք չունին։ Նա Հայոց եկեղեցին Դ. դարում ենթարկուած է համարում ոչ միայն կեսարիային, այլ և Հոռվմին։ Հոգեոր հաղորդակցութիւնն ու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը նախկին եկեղեցու մէջ ստորագրելութեան անպայման նշան չէր, մանաւանդ որ փաստեր ունինք, թէ Հայոց բոլոր կաթողիկոսները կեսարիայում չեն ձեռնադրուած։ Լուսաւորչի առաքելական գործունէութիւնը ամբողջ Հայաստանի համար չընդունելով իսկ, *) նորա շնորհիւ քրիստոնէական կրօնը պետական դարձաւ աւելի վաղ, քան հոռվմէական կայսրութեան մէջ։ Հայերի պատերազմը Մաքսիմինի դէմքրիստոնէութեան համար, անհերքելի փաստն է այդ իրողութեան։ **) Այդ ժամանակուանից էլ կազմակերպուել է սկսում Հայոց եկեղեցու նուիրապետութիւնը տարբեր բնաւորութեամբ և պայմաններով, քան հոռվմէական պետութեան մէջ (թէպէտոչ առանց կայսրութեան քրիստոնէութեան ազդեցութեան)։ Մինչդեռ այստեղ նուիրապետութեան հիմքը քաղաքական բաժանումներն են, Հայաստանում նախարարական

*) Weber. die katholische Kirche և H. Marrъ, Крещеніе Армінъ, Грузинъ, Абхазовъ и Алановъ. сп. 1905.

**) Եւսեբիոս կեսարացի IX.

տներն ու իշխանութիւնները, *) յաճախ տոհմական բնաւորութեամբ։ Բարսեղ Մեծի թուղթն ուղղուած է Փոքր, և ոչ Մեծ Հայքի եպիսկոպոսներին.**) իսկ Փոքր Հայքը վաղ ժամանակներից կայսրութեան մասն էր և ենթարկուած այդ պատճառով էլ կեսարիայի աթուին։ Հերքելով Հայոց եկեղեցու իրաւասական կախումը կեսարիայից կամ Անտիոքից, հերքում է ըստ ինքեան և Վրաց եկեղեցոյ միջնորդական կախումը Անտիոքից։ Վրաց եկեղեցու Անտիոքից կախման ոչ մի դրական ապացոյց կամ աղբիւր չունինք հին դարերից։ այդ հայեացքը ուշ ժամանակի ծընունդ է, երբ վրացիք ձգտում էին ոչնչացնել ամեն ինչ, որ յիշեցնում էր Հայոց հետ ունեցած նախկին յարաքերութիւնը***), Վրաց տարեգրութիւններին, ուրոնց համաձայն Վրաստանը պէտք է կախումն ունենար Անտիոքի աթուից և մինչև իսկ մկրտուած Եւստաթիոս եպիսկոպոսից, հեղինակն ինքն էլ նշանակութիւն չէ տալիս։ Անարժէք են միջնադարեան օտար ժամանակագիրները՝ ինչպէս Նեղոս Դոքսապատիա****), Բալմասան, Եպիփան կիպրացի,*****) թէպէտ հեղինակը

*) Հ. Ածոնցъ, Արmenia въ эпоху Юстиниана Гл. XII.

**) Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան. Աթոռ Հայաստանեաց եր. 41.

***) Տես. Արարատ 1907. սեպտ. —նոյեմբ. «Վրաց եկեղեցու ինքնազլուխ կառավարութեան խնդիրը Ռուսաց նախապատրաստական եկեղեցական ժողովում» յօդուածի մէջ պրոֆ. Մասի զեկուցումը։ Հ. Ակինեանի գրքի մէջ եր. 273—289.

****) Կարգագրութիւն Պատրիարքական աթոռոցն հր. Ֆ. Ն. Ֆինկ. Կաղարշապատ, 1902, եր. 5—6.

*****) Վրատ. Ֆինկ. Տփիս. 1902 եր. 16.

հայմակերպւում է նրանց տուած տեղեկութեան։
Աչքի է ընկնում տեղ տեղ նաև հեղինակի կուսակցական վերաբերմունքը դէպի իւր պատմութեան աղբիւրներն ու գործող անձինք։ Կիւրիոնն անպայման համակրութիւն է վայելում նորա աչքում, նա «Մեծ մարդ» է, «իմաստուն և շրջահայեաց», նորա գրածը ճշմարտութիւն։ Նոյն իսկ առանց աղբիւրների ցուցման ենթադրում է, թէ նա «բացաւ ուսումնարաններ, թարգմանեց ու գրոց մեկնութիւններ և այլ վարդապետական գրուածքներ»։*) Իսկ նորա հակառակորդները և Հայոց եկեղեցու ներկայացուցիչները ենթարկուած են կասկածի և քննադատութեան։ Այսպէս «արժանահաւատ» չէ Մովսէս Յուրատաւեցին իւր տեղեկութեամբ, թէ Կիւրիոնը բռնի միջոցներ է գործադրել հակառակորդների դէմ, թէև նոյնը կրկնուած է Յուրտաւի համայնքի կողմից։ Նոյն իսկ համայնքի թղթի մէջ ըստ հեղինակի Մովսէս ընդմիջարկութիւն է արել Կիւրիոնին «բըռնաւոր գուոզ» անուանելու համար, այն ինչ Կիւրիոնի վարմունքը իւր եպիսկոպոսի դէմ՝ ինն օր չթողնելով ներկայանալ իրեն՝ ապացոյց է, որ Կիւրիոնը հեռու չէր «բոնաւոր» և «գուոզ» լինելուց։ «Անիմաստ» է համարում Յուրտաւեցու վկայութիւնը, թէ Կիւրիոնի քաղկեդոնական լինելու մասին տեղեկութիւն չունէր իւր ձեռնադրութեան ժամանակ, մինչդեռ աղբիւրները ակնյայտնի ցոյց են տալիս, որ Կիւրիոն ծածկել էր այդ իրողութիւնը իւր բարերար Մովսէս կաթողիկոսից մինչ այն աստիճան, որ Հայոց եկեղեցու միաբնակ վարդապետութեան ախոյն նրան վրաց կաթողիկոս էր ձեռնադրել քաղ-

կեղոնականութեան դէմ վարած մաքառման խիստ ժամանակ։ Ընդհանրապէս Կիւրիոն ընդունակ էր խուսափել շիտակ պատասխաններից կամ սքօղել իւր արարմունքը, նպատակին համելու համար, ինչպէս, օրինակ, Սմբատ Բագրատունուն գրած թղթում։ Վըրդանէս քերգողը «անհանդարտ անձ մը և քաղկեդոնականաց մոլեւանդ հակառակորդ» է, «իւր գիտութեամբ շլացած», «անվայել», «անբարհաւաճ և անխոհեմ» ու ճով գրով։ Արբահամ կաթողիկոսը «անխորհուրդ կրքի յուզմամբ» Վրաց բաժանման առիթ։ *) Մենք կրքի յուզմամբ։ Վրաց բաժանման առիթ։ Մենք ընդունում ենք, որ Վրդանէս իւր գիտութեան և հաւատոյ ճշմարտութեան մէջ համոզուած էր և վստահ, Աբրահամ կաթողիկոս փոքր ինչ խիստ իւր առաջին թղթում, բայց այդ հանգամանքը բղխում էր այն յարաբերութիւնից, որ ունէին Հայոց և Վրաց եկեղեցիները մինչ այդ ժամանակ։ Հայերն զգում են իրենց առաջնորդողի գերում, ինչպէս և էին իրօք, և Կիւրիոնին իսկական հերձուածի պատճառ համարում։ Կիւրիոն յարձակուելու վիճակի մէջ չէր ոչ իւր գիրքով և ոչ իւր բաժանաբար, գործողութեամբ։

Այս ընդհանուր նշանակութիւն ունեցող նկատողութիւններից յետոյ՝ հարկ չենք համարում երկրորդական արժէք ունեցող առարկութիւնների մէջ մտնել։ Աշխատութիւնը ընդհանուր առմամբ համարում ենք գնահատութեան և խրախուսանքի արժանի Ղուկասեան Մրցանակաբաշխութեան կողմից։

Գարեգին Վարդապետ Յովսէփիսան

18 գետր. 1911 թ.

Ա. էջմիածին

*) Եր. 261:

*) Եր. 215/6, 224, 225/6.—193, 226.—224

անդյան մասնացքն էակայ և թի Առաջ տօնաբուժութեա
ու բանարդ առջարդ աշխազաւթալ բանաւուն ու բանաւուն
ու ազգա անդ պահանձաւաւուր Առաջ բանաւուն
անդաւ պահաւ այն առջարդ պահանձաւ ու այն անդաւ
ու այն անդաւ առջարդ պահանձաւ անդաւ պահանձաւ
անդաւ անդաւ առջարդ պահանձաւ անդաւ պահանձաւ
ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՏԵԱՐՔ
ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՅ ԴՈՒԿԱՍԵԱՆ ԿՑԱԿԻ
ի Տփղիս

Անցեալ տարւոյ նոյեմբեր 20 թուակիր և թ-
70 թուահամար գրութեամբ ինձ ուղղուած առաջար-
կին, և դեկտեմբեր 3 պատասխանագրովս յայտնածյանձ-
նառութեանս համեմատ, կուգամ գրաւոր Եւ պատճառա-
բանեալ կարծիք լայտնել, ինձ ուղարկուած Հայոց Եկեղե-
ցոյ կանոնական իրաւունքը ձեռագիր աշխատութեան մա-
սին, որ Ղուկասեան մըցանակաբաշխութեան մըցման
մասնակցելու դիտմամբ յղուած էր նոյն կտակի մնա-
յուն վարչութեան Յանձնաժողովիդ:

Աշխատութեան հեղինակը Լահեան ծածկանունի
ներքե սքողեալ է, և եկեղեցական կամ աշխարհական
ըլլալն ալ անծանուչ մնացած ըլլալով, ոչ պարոն և ոչ
վարդապետ տիտղոսը կրնամ աւելցնել, և կը բաւակա-
նանամ արգոյ Լահեան կոչել զինքն։ Գրութեան տեղ
ցուցուած է Գերմանիայի Բերլին մայրաքաղաքը, եթէ
այն ալ ծածկանուն մը չէ, վասն զի թէպէտ օտարու-
թեան մէջ գտնուելը կը յիշէ (էջ ժդ), բայց էջմիածնի
շատ ընտանի մէկ մը կը տեսնուի, որ իւր ձեռքին
ներքե ունեցած է հոն եղած գրչագիրները, քան թէ
կը ոռակու թանառաննեռու մէջ գտնուածները։

Զեռագիրը բնդորինակուած է 16^o չափով տեսրի

մը մէջ, որ իէ +201 էջեր կը պարունակէ յստակ գը-
բռութեամբ:

Արդոյ Լահեանի երկասիրութիւնը մակագրուածէ, Հայոց Եկեղեցւոյ կանոնական իրաւունքը: Հետազոտութիւններ նորա կանոնագրքի խմբագրութեան, բովանդակութեան եւ գործադրութեան մասին: Այս կրկին մակագիրներէն իսկական պէտք է նկատել երկրորդը, եթէ գործը առունին հետ բաղդադենք. վասն զի մակագիրին առաջին մասին բացատրութեամբ, Հայոց եկեղեցական իրաւագիտութեան կամ հայ կանոնագիտութեան կամ հայ կանոնագիտութեան կանոնաւոր ձեռնարկ մը, կամ գիտական աշխատանք մը կրնար սպասուիլ, որ արգոյ Լահեանի գործին մէջ չգտնուեիր. այլ պարզապէս կանոնագիրքի պարունակութեան վերլուծութիւն մըն է, բնագիրներու հետ բաղդադրւած: Հետեաբար միայն ու միայն այդ տեսակէտէն պէտք է նկատի առնել ներկայուած աշխատութիւնը, և ոչ երբէք իբր եկեղեցական իրաւագիտութեան ձեռնարկ կամ գասագիրք մը, և ոչ ալ իբր եկեղեցական կանոններու գիտական լուսաբանութիւն մը:

Գործին պարունակութիւնը հետևեալն է.

1. Իւր գործածած աղբիւրները (էջ ա—զ), որք
են 4 էջմիածնի գրչագիրներ, որ իբր հիմնական աղ-
բիւրներ ծառայած են. 8 նախնեաց մատենագրու-
թիւններ, 10 հայերէն, 10 գաղղիերէն, 1 գերմանե-
րէն և 9 սուսերէն աշխատութիւններ։ Վերջին հայ
գրողներէն յիշած է Բաստամեանց Վահան վարդա-
պետը. Բայց յիշուած չէ Մելիք-Թանգեանց Ներսէս
վարդապետի 1903—5-ին հրատարակած աշխատու-
թիւնը։

2. Ներածութիւն (էջ է-իէ), ուր գլխաւորապէս տեղեկութիւններ տուած է իրբ հիմնական աղ-

բիւր ծառայած ձեռագիրներուն վրայ:

3. Շըջան Ա. գլուխ Ա. Քրիստոնէական եկեղեցւոյ հաստատուիլը երկրիս վրայ. 3 հատուածներ. (էջ 1—21), հակիրճ ամփոփում մը ծանօթ տեղեկութեանց:

4. Գլուխ Բ. եկեղեցւոյ և հոռվմէական-բիւզանդական պետութեան յարաբերութիւնն ու. փոխադարձ ազգեցութիւնը (էջ 21—37). Նոյնաէս համառօտ ակնարկներ գլխաւոր կէտերու մասին:

5. Գլուխ Գ. եկեղեցական կանոնների աղբիւրներն ու նոյն ժողովման պատմութիւնը. 2 հատուած (էջ 37—51): Յուցակներու քաղուած մըն է, որ նորութիւն չպարունակեր: Այս երեք գլուխները ընդհանուր եկեղեցւոյ տեսակէտէն նայուելով ա. շրջանը ըստուած են. յաջորդները Բ. շրջանի վերածուելով հայոց եկեղեցւոյ տեսակէտէն գրուած են:

6. Շըջան Բ. գլուխ Ա. հայոց եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը, նորա յարաբերութիւնն ընդհանրական եկեղեցւոյ հետ, բաժանումն ու ազգայնացումն. 2 հատուած (էջ 52—58):

7. Գլուխ Բ. հայոց եկեղեցւոյ ընդունած կանոններ. 12 հատուած (էջ 58—115):

8. Գլուխ Դ. ընդհանրական եկեղեցւոյ կանոնների հայերէն թարգմաններու ժամանակն և Հայաստանեաց եկեղեցւոյ կանոնագրքի խմբագրութիւնը. (էջ 115—127):

9. Գլուխ Դ. հայոց եկեղեցւոյ ազգային կանոններ. 10 հատուած (էջ 127—157):

10. Գլուխ Ե. կանոնագրքի գործածութիւնը հայոց (էջ 158—160):

11. Գլուխ Զ. կանոնների բոլանդակութիւնն ու եկեղեցական դատավարութիւն (էջ 160—166):

12. Գլուխ Է. եկեղեցական դատավարութիւնը ընդհանրապէս (էջ 156—170):

13. Գլուխ Ը. հայոց եկեղեցական կառավարութիւնն և նոյն դատարանի կազմութիւնը (էջ 170—188):

14. Գլուխ Թ. Հայոց եկեղեցական դատավարութեան սահմանած պատիճները (էջ 188—194):

15. Գլուխ Ժ. լրացուցիչ տեղեկութիւններ Հայոց եկեղեցւոյ կանոնների հիման վրայ (էջ 194—196):

16. Եղբակացութիւն (էջ 197—198). որ չորս կէտեր կը պարունակէ, պղտիկ վերջաբանով մը:

17. Նիւթերի ցանկը (էջ 199—201):

Այս քաղուած տողերնուս նպատակն է զգալի կերպով ցուցնել, թէ փոքրադիր էջերով գրուածի մը մէջ ինչ չափ անձուկ տեղ գրաւած են կանոնական նիւթերը, որով ինքնին կը յայտնուի թէ արգոյ Լահեանի գործին մէջ հնար չէ անոնց գոհացուցիչ մշակութիւնը որոնել:

Ամէնէն ընդհարձակ մասերը Բ. շրջանի Բ. և Դ. գլուխներն են. սակայն անոնք իւրաքանչիւր ժողովի կանոնական ցանկերուն ամբողջ արտադրութեամբ ընդարձակուած են, կցելով միանգամայն շատ կանոններու բառացի ընդօրինակութիւնները, ինչ որ չկընար նիւթի մշակութիւն սեպուել:

Իւրաքանչիւր գլուխի ներքեւ պարունակուած նիւթերը պարզ կերպով արտայայտուած են, և թէպէտ համառօտակի, բայց յատուկ գաղափար տալու բաւական են: Սակայն յայտնուած գաղափարներէն որոնք որ առաջին շրջանին կը պատկանին, ամէն օտար հեղինակներու ըսածներն են, իսկ երկրորդ շրջանին պատկանողներն ալ՝ Բաստամեանց և Մելիք-Թանգեանց վարդապետներուն արտայայտած

կարծիքներուն վրայ կարեռը նորութիւններ չեն աւելցնել:

Ինչ որ արգոյ Լահեանի աշխատութեան գլխաւոր ձիրք կրնանք սեպել կանոններուն հայերէն թարգմանութեանց բնագիրներուն հետ բաղդադմամբ ցուցած տարբերութիւններն են, որ օգտակար կրնանը ըլլալ հետազօտութեամբ պարապողներուն: Սակայն այդ մասին օգտուելու համար աւելի լրացեալ ծանօթութիւններ պէտք են, քան որչափ արգոյ Լահեան կրցած է ընձեռել:

Արգոյ Լահեանի աշխատութիւնը իւր ամփոփ վիճակին մէջ ալ կրնար եկեղեցական ուսանողներու և պաշտօնեաներու իբր ձեռնարկ ծառայել, եթէ գրբչագիրներու և թարգմանութեանց տարբերութիւններու տեղ բուն կանոնական նիւթերու մշակութեան աւելի մտադրութիւն դարձուցած ըլլար:

Եյդ պատճառներով իրաւունք կը սեպենք գիտել տալ, որ արգոյ Լահեանի գործը նպատակի կողմէն անորոշ վիճակ մը ունի: Հետազօտութեամբ ըզբաղողները չգոհացներ իւր անկատար ծանօթութիւններով, կանոնագիտական ձեռնարկ վնասողները չգոհացներ իւր աւելորդ ծանօթութիւններով:

Գործին մէջ յառաջ բերուած բաղդադութեանց իսկութեան մասինքը բնալ չենք կարող, որովհետեւ իբր հիմնական աղբիւր ծառայող գըշագիրները մեզի մօտ չեն. և օտար եկեղեցեաց մատեսներն ալ տրամադրելի չունինք, բայց բաղդադութեանց ձշառութեան մասին երկբայելու պատճառ չունինք, որովհետեւ նոյն իսկ գործին ոճը իսկամիտ և բծախնդիր պրպըտողի ձիրքերը կը վկայէ իւր հեղինակին վրայ:

Իսկ հեղինակին յայտնած կարծիքներուն մասին

շատ ըսելիք չմնար. քանի որ անոնց մէջ նոր և կարեռ և ինքնայորդոր արտայայտութիւններ չկան: Ընդհանրապէս կը սիրէ հետեւիլ խիստ քննադատութեան, բայց այդ միտումը միշտ ազգային աղբիւրներուն և եղելութիւններուն վրայ կը ծանրացնէ: Մինչև իսկ Հայոց եկեղեցւոյն առաքելականութեան մասին երկմիտ հայուածք մը կը յայտնէ և իւր աշքին առջև հայ աղբիւրներէն հազիւ թէ մէկ երկուքը ազատ կը մնան անվաւերականութեան մեղադրանքէն:

Մեր գիտողութիւնները անաշառօրէն բացատրելէ ետքը, պէտք է ընդունենք թէ.

Նկատելով որ հայ եկեղեցւոյ կանոնագիրքը ցարդ և ոչ իսկ իբր պարզ մատենագրութիւն հրատարակուած է.

Նկատելով որ հայ կանոնագիրքին վրայ ուսումնասիրութիւններ չկան ըսուելու չափ՝ քիչ են.

Նկատելով որ հայ կանոնագիրքին վրայ տեղեկութիւն տուող առձեռն գիրք մը բնաւ չկայ.

Նկատելով որ արգոյ Լահեանի աշխատութիւնը, գիտողութեանց ենթակայ ըլլալով հանդերձ, մեծ դատարկ մը կը լեցնէ.

Նկատելով որ ինքն ալ առանց լրացած ու կատարեալ աշխատանք մը տալու յաւակնութեան (էջ ԺԴ), լոկ սպասուած պէտք մը գոհացնելու փափաքն ունի (էջ ԺԱ).

Նկատելով որ գործը հակառակ կատարեալ չըլլալուն բաւական չափով տեղեկութիւններ տալու կծառայէ.

Նկատելով որ ամէն ձիւղի մէջ նախաձեռնարկներ, կատարեալ ըլլալով հանդերձ, լաւագոյն երկերու ճանպայ բանալու արդիւնքը կունենան.

Կրնանք եղբակացնել թէ.

Արդոյ Լահեանի կաղմած ծրագիրը դովութեան արժանի է.

Արդոյ լահեանի ձեռնարկած աշխատութիւնը գնահատութեան արժանի է.

Արդոյ Լահեանի ներկայացուցած երկասիրութիւնը քաջալերութեան արժանի է:

իսկ մըցանակի տուուչութեան որոշումը քննիչին
ձեռնհասութենէն դուրս կը մնայ, վասն զի ոչ թէ
անհատաբար, այլ ուրիշ ներկայուած գործերու
հետ բաղդատաբար նկատառութեան ենթակայ է: Ուս-
տի այդ կէտը Դուկասեան կտակի վարչութեան
մնայուն Յանձնաժողովիդ ձեռնհասութեան կը պատ-
կանի, որ ուրիշ ներկայուած աշխատութեանց տեղե-
կութիւնն ունի:

Սակայն իբրև կարեոր դիտողութիւն կը համարձակիմ աւելցնել, որ մրցանակի որոշման մէջ, պէտք է յաջողութեան աստիճանին հետ նիւթին բնութիւնն ալ նկատի առնուի, քանի որ մրցումը միենոյն որոշ նիւթի վրայ բացուած չէ: Նոր և գըժուարին նիւթի մէջ չափաւոր յաջողութիւնը, պէտք է նախադասուի սովորական և դիւրին նիւթի մէջ ցուցուած կատարեալ յաջողութեան:

Մաղթելով բարեյիշատակ Ղուկասեան Աւետիս
բարերարին հոգւոյն հանգիստ և երանաւէտ լոյս,
Յանձնաժողովիդ համար կարողութիւն և յաջողու-
թիւնը բարեւոր օքնեալ Ազգիս համար բարօրու-
թիւն ՎԱՐԴԵՅ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍ

7/11. 1922

Digitized by srujanika@gmail.com

12-й МОНОГРАФИЧЕСКИЙ

ԱՅԼՈՒՐ ԽՈՎԱՆԻ

Հ Ա Ծ Ո Ւ Ե Կ Ը Ն Ի Ւ Թ

Թիֆլիսի Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի ֆնայուն Յանձնաժողովի մուտքի և ծախքի 1910 թուի ապրիլի 4-ից
մինչև 1911 թ. ապրիլի 4-ը.

ՄՈՒՏՔ

1910 թուի ապրիլի 5 ին դրամարկղը ուներ

1. առևտրական բանկում № 55,809	25,000 լ.
2. նոյնական ընթացիկ հաշուով, գրքոյլ № 3446 4161-12	
3. գանձապահի մօտ	236-30-
	<u>29,397-42-</u>

1910 թ. ապրիլի 4 ից մինչև 1911 թ. ապրիլ 4 թ. ստացուել է

Առևտրական բանկից 25,000 լ. 0/0 (653 լ. 12 կ. + 651 լ. 67 կ.) . . . 1304-79-

Նոյն տեղից ընթացիկ 1910 թ. հաշուով 0/0 91-60-

30,793-81-

Ստ. Օբբէլեանի պատմութեան տպագր. հաշուին	410-
Ստ. Օբբ. պատմ. սրբագրութեան հաշուին	110-
1908-1910 թ. տեղեկագրի սրբագրութեան	20-8 կ.
Զքաւորներին բաժանուած 1910 թ.	197-
1908-1910 Տեղեկագրի տպագրութեան և թղթի	83-
Տէր Աւետիքեանին և Շահնազարեանին մրցանակադրամ	500-
Օբբէլեանի պատմութեան տպագրութեան թղթի	265-
Օր. Սաթենիկ Աբրահամեանին օժտագրամ	100-
Պարոն Եր. Լալայեանին՝ վասպուրականի հնութեանց ալբոմի համար	60-
Փոստի և հեռագրի ծախք	16-84-
Ցըռուիչներին և դռնապանին	3-25-
Զքաւորների ցուցակը կազմելու համար	2-
Մարկաներ	-60-
Հաշուեմատեան	-30-
Լըադիների յայտարարութիւնների համար	8-
	<u>1776-07-</u>

Տոմս 1911 ապրիլի 4 ին

1. Տոմս առևտրական բանկի № 58211	25,000 լ.
2. Նոյն բանկում ընթացիկ հաշուով գրքոյլ № 3446 3557-50 կ.	
3. գանձապահի մօտ առձեռն	460-24-

30,793-81-

92102

ՀՅԱ զբանակար թիվ 3 միջրա մաս 0191

08.08.06 Կայսերական ժամանակական Հ.

ՀՅԱ Հայոց թիվական բառեր Հ.

ՀՅԱ Վեպահնձոր Հ.

ՀՅԱ Հ. 0191 միջրա թիվ 4 միջրա մաս 0191

17. 08.06 թիվ 4 000,35 պահանջանագուման

ՀՅԱ Հ. 0191 բառեր սկզբ մաս

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԻՒԾ

1910 ապրիլի 3 ից մինչև 1911 ապրիլի 3-ը

1. ԵՂԻՉԵ

1910 ապրիլի 3-ին	
Պահաստում կար	93 անկ.
	6 կ.
Գուտտեմբէրգ գրավաճառան	200 անկ.
Կենտրոնական	115 անկ.
	20
	<hr/> 434

Վաճառուած են	
Գուտտեմբէրգ գրավաճառանոցում	200 անկ.
Կենտրոնական	» 10 անկ.
	2 կ.
Նուէրներ	5 անկ.
	1 կ.
	<hr/> 216
1911 ապրիլի 3 ին մնում է անվաճառ գրավաճառանոցներում և պահաստում ընդամենը	<hr/> Ընդամենը 434

2. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

1910 ապրիլի 3-ին	
Պահաստում կար	743 անկ.
	82 լ.
	10 փ.
Կենտրոնական	82 անկ.
	49 կ.
	<hr/> 966

Վաճառուած են	
Կենտրոնական գրավաճառանոցում	9 անկ.
Նուէրներ	» 6 կ.
	<hr/> 948
1911 ապրիլի 3 ին մնում է անվաճառ գրավաճառանոցներում և պահաստում ընդամենը	<hr/> Ընդամենը 966

3. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻ

1910 ապրիլի 3-ին	
Պահաստում կար	835 անկ.
	100 կ.
Գուտտեմբէրգ գրավաճառանոցում	100 անկ.
	75 կ.
Կենտրոնական	49 անկ.
	25 կ.
	<hr/> 1184

Վաճառուած են	
Գուտտեմբէրգ գրավաճառանոցում	50 անկ.
Կենտրոնական	» 1 անկ.
Նուէրներ	47 կ.
	2 անկ.
	<hr/> 1084
1911 ապրիլի 3-ին մնում է գրավաճառանոցներում և պահաստում ընդամենը	<hr/> Ընդամենը 1184

0101

11

69-8 ထိမ္မမာ 0101

ရန် ၁၀	ရှင်းများ
၁၀	
ရန် ၁၀၃	ရှင်းများ
ရန် ၇၁၁	ရှင်းများ
၀၃	
186	

ယခုစာတွေ ၄၈ ထိမ္မမာ 1101

ရန် ၈၁၅	ရှင်းများ
၁၃	
ရန် ၂၁	ရှင်းများ
ရန် ၂၃	ရှင်းများ
၁၃	
300	

ယခုစာတွေ ၄၉ ထိမ္မမာ 1101

ရန် ၁၀၇	ရှင်းများ
၁၀၇	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺԱՌԱՐԱՆԻ ՄԱՍՅՈՒՆ ՅԱՆԴԱՇՈՂՈՎԻ ՄՈւտքի և ԺԱԼՄՔԻ 1911 թուի ապրիլի 4-ից

ԹԻՖԼԻՍԻ Վահագ աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մասյուն Յանձնաժողովի մուտքի և Ժալմքի 1911 թուի ապրիլի 4-ից
մինչև 1912 թ. ապրիլի 4-ը

ՄՈՒՏՔ

1911 թուի ապրիլի 5-ն դրամարկով ուներ

1. առևտրական բանկում № 58,211

25000— լ.

2. նոյնական ընթացիկ հաշուով, գրքոյի № 3446

3557—50

3. գոնձապահի մօտ առածեն

460—24

29017—74

1911 թ. ապրիլի 4-ից մինչև 1912 թ. ապրիլ 5-ը ստացուել է

1185—85

Առևտրական բանկից 25,000 լ. %

98—72

Գրեերի վաճառումից

101—94


Ընթացիկ հաշուի տոկոս

30404—25

Աղքատներ բաժանուեց	315—80 լ.
Ստեփաննոս Օրբելեանի սրբազրութեան հաշուին և ցանկ կազմելու	112—
Ստ. Օրբելեանը կազմելու կազմաբարին	13—50
Ստ. Օրբելեանի տպագրութեան մնացորդը	68—18
Թուղթ Յովհաննէս կաթողիկոսի համար	203—
Յովհ. կաթողիկոսի տպագրութեան վարձ	313—20
Յովհ. կաթողիկոսի սրբազրութեան և ցանկ կազմելու	140—
Թուղթ Առիստակէս Լաստիվերացու համար	95—
Հոգեհանգստի համար յայտածարութեան վարձ	9—
Մանր ծախք	21—98
Օժտագրամ Մարիամ Մուրագեանին	100—
Օր. Սօֆիա Փէշտամաննի օժտագրամի փոխարէն թաղման վարձ	25—
Օժտագրամ Շուշանիկ Հախապահելեանցին	100—
Լաստիվերացու տպագրութեան հաշուին	63—80
	<hr/> 1580—46

ԴՐԱՅԱՐԿ 1912 ապրիլի 5-ին

1. Առևտրական բանկի տոմս № 61,092	25,000—
2. Նոյն առնելում ընթացիկ հաշուով գրքոյի № 3446	3,810—29
3. Գոնձապահի մօտ առածեն	13—50
	<hr/> 30,404—25



ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԻՒԹ

1911 ապրիլի 3-ից մինչև 1912 ապրիլ 6-ը

1. ԵՂԻՉԵ

«Եղիշե»-ն տպուել է 1185 օրինակ.

այս զբթերից մինչեւ այժմ՝

Նուէր է տպած	37	օրինակ.
Գուտտենմբ. գրատ. վաճառել է	780	»	
Կենտրոնական	»	87	»
Պահեստում	»	165	»
		1069	

Եմանականում

Մնում է հրդեհից մաս. գրքեր	113	օրինակ.	
Թանգարանում մնում է	3	»	
		1185	օրինակ.

2. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Գրավաճառանոցներում և պահես-
տում կար 948 օր.

Վաճառուած	37	օրինակ.
Նուէր տպած.	5	»
Անվաճառ	906	»
		948	»

3. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Գրավաճառանոցներում և պահես-
տում կար 1084 օր.

Վաճառուած	3	օրինակ.
Նուէր		2	»
Մնում է անվաճառ	1079	»
		1084	

4. ԱՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ

Տպարանից ստացուած 1185 օր.

Վաճառուած	15	»
Գրավաճառանոցներում և պա- հեստում	1148	»
		1185	


5. ՅՈՎՃԱՆՆԵՍ ԿԱՐՈՂԻԿՈՍ

Տպարանից ստացուած 1185 օր.

Գրավաճառանոցներում և պա- հեստում	1181	»
		1185	

Կառավարիչ Թանգարանի Գիւղ ա. և Աղանեանց





Հայաստանի Ազգային գրադարան



NL0431252

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431251

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431250

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431249

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431248

3346

